ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

Ք. Սևան

23.11.2017թ.
Ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան
Գնահատողներ՝ Խաչիկ Կիրակոսյան
Վարդուհի Վարդանյան
Բացողներ՝ Ռոմելա Հարությունյան
Մարի Առաքելյան
Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով հանձնաժողովի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
(Մ. Սիմոնյան)

1. <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ի տնօրեն Գուրգեն Բաբայանի ահազանգի քննարկման վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ի տնօրեն Գուգեն Բաբայանի ահազանգի քննարկման վերաբերյալ
(Մ. Սիմոնյան)

1.1 22.11.2017թ.-ի ժամը 18:00-ին ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ է զանգահարել <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ի տնօրեն Գուրգեն Բաբայանը և հայտնել, որ ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագրի նախագիծը իրենց կողմից հաստատվել և 08.11.2017թ.-ին պայմանագրի կատարման ապահովման հետ միասին պատվիրված ծրարով ուղարկվել է ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ:

1.2 Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ 09.11.2017թ.-ին <<ՀԱՅՓՈՍՏ>> ՓԲԸ-ի Սևանի մասնաճյուղի 1502 տեղամասի աշխատակիցը <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից պատվիրված ծրարը օրվա աշխատանքայի վերջնաժամին հանձնել է ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ աշխատակցին, որն էլ հաջորդ օրը թյուրիմացաբար ծրարը չի փոխանցել գործավարություն, ինչի պատճառով պատվիրատուի ղեկավարը կամ գնահատող հանձնաժողովը չի ստացել <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ի ուղարկված փաստաթղթերը:

1.3 Գնահատող հանձնաժողովի կողմից զննվեց <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից 08.11.2017թ.-ին ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ ուղարկված ծրարը: Զննությամբ պարզեց որ ծրարում առկա է ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/2

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագրի ապահովումը, պայմանագրի նախագիծի 2 օրինակը՝ հաստատված <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից և ուղեկցական գրությունը:

1.4 Նկատի ունենալով այն հանգամանքը, որ <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում՝ պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ է ներկայացրել պայմանագրի ապահովումը և հաստատված պայմանագրի նախագիծը ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ուժը կորցրած ճանաչել գնահատող հանձնաժողովի 21.11.2017թ.-ի թիվ 5 արձանագրությունը և ընթացակարգը շարունակել հրավերով սահմանված կարգով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Խ. Կիրակոսյան

Վ. Վարդանյան

Ռ. Հարությունյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան